

# Հայաստանի Հանրապետություն

## Գիտելիքն է ժամանակակից աշխարհի պահանջը



ՀԱՀ—ը ամերիկյան չափանիշներին համապատասխան կրթություն է տալիս

Վերջին օրերին Հայաստանում ամենաշատ հյուրեր ընդունող կրթական կառույցը Ամերիկյան համալսարանն է: Տարբեր միջոցառումների շրջանակներում համալսարանի ներկայացուցիչները, հիմնադիրներն ու ուսանողները շնորհավորանքներ են ստանում տեղացիներից եւ արտերկրից ժամանած հյուրերից: Երեկվա օրն էլ բացառություն չէր. հյուրը Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանն էր: Գործադիր մարմնի ղեկավարը մասնակցեց ՀԱՀ քսանամյա տարեդարձին նվիրված հանդիսությանը: Նախ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչության տնօրեն Նաթան Եպիսկոպոս Հովհաննիսյանը ներկաներին ներկայացրեց Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ—ի օրհնության խոսքը, ապա ՀՀ կառավարության ղեկավարը կառավարության անունից շնորհավորեց համալսարանի 20—ամյակի կապակցությամբ: «Այս 20 տարիները մեկ ակնթարթ էին: Ես մտովի վերադարձա այս դահլիճ, որտեղ 20 տարի առաջ ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Վազգեն Մանուկյանը, եւ ես որպես Գերագույն խորհրդի նախագահության անդամ նույնպես պատիվ ունեի մասնակցելու հանդիսավոր նիստին, որտեղ հայտարարվեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել այս հիասքանչ շենքը տրամադրել Ամերիկյան համալսարանին: Դա մեծ իրադարձություն էր: Մենք լի էինք հույսերով եւ այսօր կարող ենք արձանագրել, որ այդ հույսերը ինչ—որ մասով ի կատար են ածվում: 20 տարիները մի ակնթարթ էին, որովհետեւ լի էին իրադարձություններով, որոնք ունեին պատմական նշանակություն մեր ժողովրդի համար: Մի ակնթարթ էին, որովհետեւ ժամանակակից աշխարհում ժամանակը խտացված է իրադարձություններով, եւ այս քսան տարին կարելի է համադրել նախորդ 100 տարիների հետ: Ժամանակն ավելի արագ է ընթանում այսօր: Եվ այն, որ մենք ձեզ հետ միասին մեր պետության անկախության 20—ամյակը համադրում ենք Հայաստանի ամերիկյան համալսարանի 20—ամյակի հետ, ունի մի մեծ խորհուրդ: Այդ խորհուրդը հետեւյալն է. ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում մեր անկախ պետականության ամրապնդման հիմնական գործիքը պետք է լինի գիտելիքը»,—համոզված է Տ. Սարգսյանը: Վարչապետը գոհունակություն հայտնեց առ այն, որ Հայաստանի ամերիկյան համալսարանն ունի Միացյալ Նահանգների արտոնագիր, ինչը վկայում է, որ այն այսօր գործընթացներն իրականացնում է ԱՄՆ—ում ընդունված չափանիշներին համապատասխան: Ընդգծելով, որ տարածաշրջանում Հայաստանի ամերիկյան համալսարանի առկայությունը մեր երկրի հարաբերական առավելություններից է, կառավարության ղեկավարն ասաց. «Մենք պետք է լրացուցիչ ջանքեր գործադրենք համալսարանի գործառնությունների ընդլայնման առումով՝ հասկանալով, որ ապագա մրցակցության մեջ մենք կարող ենք հաղթել՝ տաղանդաշատ երիտասարդներին կրթելով»:

Այնուհետեւ Տիգրան Սարգսյանը հանդիպեց համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների հետ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման 20—ամյակի առթիվ եւ կրթության ու գիտության բնագավառում ներդրած ակնառու ավանդի համար ՀՀ պետական ճարտարագիտական համալսարանի մեխանիկա—մեքենաշինական ֆակուլտետի պրոֆեսոր, «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Յուրի Սարգսյանին կառավարության ղեկավարը պարգևատրեց ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Երեկոյի ընթացքում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից կրթական ասպարեզի այլ գործիչներ եւս պարգևատրվեցին նախարարության ոսկե հուշամեդալով եւ խրախուսական շնորհակալագրով: Ողջունելով եւ շնորհավորելով համալսարանի 20—ամյակի կապակցությամբ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը ներկաների հետ կիսեց Ամերիկյան համալսարանի ապագայի հետ կապված լավատեսությունը. «Ուզում եմ վստահ լինել, որ Ամերիկյան համալսարանի բարերար ազդեցությունը մեր կրթական համակարգի վրա կլինի

ավելի համակարգային, ավելի լայնածավալ եւ Ամերիկյան համալսարանը կօգնի մեր հասարակությանը, տնտեսությանը, ՀՀ քաղաքացիներին՝ իրենց տեղը գտնել հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային հարթակներում եւ ապահովել բարեկեցիկ ապագա իրենց եւ պետության համար: Այսօր համալսարանի շուրջ 2000 ուսանողների հիմնական մասը ստացած կրթության շնորհիվ իր բարեկեցիկ ապագան արդեն իսկ կերտել է: Այս, նաեւ մի շարք այլ փաստերի շնորհիվ ՀԱՀ—ի նախագահ Բրյուս Պոդոսյանը համալսարանում իր զբաղեցրած պաշտոնը մեծ պատիվ է համարում. «Ուրախ եմ, որ այսօր այս միջոցառմանը ներկա են նաեւ համալսարանի նախկին նախագահները»: Վերջիններիս եւ ներկայիս նախագահի ջանքերի արդյունքում Ամերիկյան համալսարանն իր 20—ամյա գործունեության ընթացքում կարողացել է հասնել նրան, որ Կալիֆորնիայի համալսարանը հպարտանա իր հետ ունեցած կապի համար եւ ցանկություն հայտնի համագործակցությունն ավելի ընդլայնելու եւ ամրապնդելու: «Ամերիկյան համալսարանը լավ օրինակ է: Մենք ողջունում ենք այն հանգամանքը, որ Հայաստանում ամերիկյան ոճի կրթություն է իրականացվում: Գտնում ենք, որ կրթության ոլորտում բազմազանությունն օգտակար է»,—ասված էր Կալիֆորնիայի համալսարանի նախագահ Մարկ Յուդոֆի ուղերձում:

**Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ**